



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<< 02 >> 2019թ. *Հակոբյան*

N ՄԿ/168-2019

ք. Արմավիր

**ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N1239-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 8-րդ, 10-րդ, 21-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության Հանրային ֆինանսների կառավարման քաղաքականության վարչություն պետական ներքին ֆինանսական հսկողության քաղաքականության բաժնի պետ-վարչության պետի տեղակալի 2019 թվականի հուլիսի 4-ի N 27-2/27-2/11289-2019 գրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը, «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում» պարտադիր վերապատրաստման թեմաների շրջանակում կազմակերպվող չորսօրյա դասընթացին մասնակցելու նպատակով.

**կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Գրիգորյանին 2019 թվականի հոկտեմբերի 7-ից 10-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան:
2. Արմինե Գրիգորյանի գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Սրապիոն Մարտիրոսյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

*X* *S. Matevosyan*

VERIFIED OCSP 10/2/2019 19:16:07 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

